

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2010-2012 ԹԹ.
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը եւ Ռուսաստանի
Դաշնության մշակույթի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,
Ցանկանալով զարգացնել Հայաստանի եւ Ռուսաստանի մշակույթների փոխհարստացման
գործընթացը,

հիմնվելով 1995 թ. նոյեմբերի 13-ի "Հայաստանի Հանրապետության
Կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջեւ մշակույթի,
գիտության եւ կրթության բնագավառում համագործակցության մասին" համաձայնագրի
վրա
պայմանավորվեցին ներքոգրյալի մասին.

1. Կողմերը բարենպաստ պայմաններ կստեղծեն կերպարվեստի եւ բեմարվեստի,
կինեմատոգրաֆիայի, գրադարանային եւ թանգարանային գործի, դեկորատիվ-կիրառական,
ինքնագործ եւ կրկեսային արվեստի, պատմամշակութային ժառանգության օբյեկտների,
ժողովրդական արհեստների պահպանման բնագավառում համագործակցության զարգացման
համար:

2. Կողմերը կնպաստեն ուղիղ կապերի հաստատմանը երաժշտական
հաստատությունների եւ համերգային կազմակերպությունների միջեւ, կատարողների,
երաժշտական կոլեկտիվների եւ մասնագետների փոխանակմանը, ինչպես նաեւ Հայաստանի
Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության ստեղծագործական միությունների միջեւ
կապերի ընդլայնմանը:

Կողմերը կիրախուսեն հայկական եւ ռուսաստանյան կատարողների եւ կոլեկտիվների
փոխադարձ մասնակցությունը երկու պետությունների տարածքներում իրականացվող
միջազգային երաժշտական փառատոներին, մրցույթներին եւ ավանդական երաժշտական
միջոցառումներին, կաշակցեն համատեղ համերգային ծրագրերի եւ նախագծերի
կազմակերպմանն ու անցկացմանը, մենակատարների, ռեժիսոր-բեմադրիչների եւ
պարուսույցների փոխանակմանը:

3. Կողմերը կօժանդակեն ուղիղ կապերի հաստատմանն ու զարգացմանը թատրոնների
միջեւ, կատարողների, բեմադրական խմբերի, քննադատների եւ թատերագետների
փոխանակմանը, ներկայացումներ բեմադրելու նպատակով ռեժիսորների հրավիրմանը
Հայաստանի Հանրապետություն եւ Ռուսաստանի Դաշնություն, ինչպես նաեւ
հյուրախաղերի կազմակերպմանը, Կողմերի պետությունների տարածքում անցկացվող
միջազգային թատերական փառատոների մասնակցությանը:

Կողմերը կօժանդակեն դրամատիկական եւ երաժշտական թատրոնների, գեղարվեստական
խմբերի եւ անհատ կատարողների ելույթների կազմակերպմանը՝ Մշակույթի օրերի եւ
Շաբաթների անցկացման շրջանակներում, ինչպես նաեւ Հայաստանի եւ Ռուսաստանի
ժողովուրդների կյանքում նշանակալից իրադարձություններին նվիրված
միջոցառումներին:

4. Կողմերը կնպաստեն Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության
թանգարանների միջեւ համագործակցության եւ գործընկերության զարգացմանը,
գեղարվեստական եւ լուսանկարչական ցուցահանդեսների, ժամանակակից արվեստի
ցուցադրությունների, թանգարանային նոր տեխնոլոգիաների մասին տեղեկատվության
փոխանակմանը, ինչպես նաեւ երկու պետությունների ժամանակակից արվեստի
թանգարանների եւ կենտրոնների միջեւ ուղիղ կապերի հաստատմանը:

5. Կողմերը՝ իրենց իրավասության սահմաններում կնպաստեն գրական եւ
թարգմանական գործունեության բնագավառում կապերի եւ կոնտակտների հաստատմանը,

կիրախուսեն փոխադարձ մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում անցկացվող գրքի միջազգային տոնավաճառներին:

6. Կողմերը կհամագործակցեն մշակույթի եւ արվեստի առանձին մասնագիտությունների աշխատակիցների համար նախատեսված կրթական ծրագրերի շրջանակներում:

Կողմերը կօժանդակեն Հայաստանի եւ Ռուսաստանի մշակույթի եւ արվեստի բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթական հաստատությունների միջեւ ուղիղ կապերի հաստատմանը:

Կողմերը պայմաններ կստեղծեն բարձրագույն կրթական հաստատությունների դասախոսների ստեղծագործական վերապատրաստումների կազմակերպման եւ որակավորման բարձրացման համար՝ Կողմերի պետությունների կրթության եւ արվեստի բարձրագույն կրթական եւ գիտական հաստատությունների եւ թատերական հաստատությունների հենքի վրա:

7. Կողմերը կզարգացնեն համագործակցությունը ժողովրդական արհեստների բնագավառում եւ տեղեկատվություն կփոխանակեն ժողովրդական արհեստների բնագավառում, այդ թվում՝ Կողմերի պետությունների տարածքում անցկացվող միջազգային ազգագրական փառատոների մասին:

Կողմերը կօժանդակեն Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության ստեղծագործական խմբերի եւ անհատ կատարողների հրավերներին ազգային երաժշտության փառատոների, երգեցողության տոների եւ այլ երաժշտական միջոցառումների՝ համաձայն այդ փառատոների կանոնակարգի, ինչպես նաեւ մշակույթի եւ արվեստի հայաստանյան եւ ռուսաստանյան գործիչների, ժողովրդական արհեստների բնագավառի մասնագետների մասնակցությունը միջազգային սեմինարների եւ վարպետության դասերի:

Կողմերը կնպաստեն ուղիղ կապերի հաստատմանը Կողմերի պետությունների ժողովրդական արվեստի տների եւ ինքնագործ խմբերի միջեւ:

8. Կողմերը՝ սույն Ծրագրի գործողության ընթացքում կանցկացնեն փոխադարձ մշակույթի օրեր՝ Ռուսաստանի Դաշնության մշակույթի օրեր Հայաստանի Հանրապետությունում եւ Հայաստանի Հանրապետության մշակույթի օրեր Ռուսաստանի Դաշնությունում:

Փոխադարձ մշակույթի օրերի կազմակերպման ժամկետները, վայրը, ֆինանսական եւ տեխնիկական պայմանները Կողմերը կամրագրեն առանձին արձանագրություններով:

9. Կողմերը համագործակցություն կծավալեն կինեմատոգրաֆիայի բնագավառում, նպաստելով համատեղ կինոնախագծերի իրականացմանը:

Կողմերը հավասարազորության սկզբունքով կօժանդակեն փոխադարձ՝ հայկական եւ ռուսական կինոյի օրերի անցկացմանը, կաջակցեն Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության կինոյի վարպետների հրավերներին Կողմերի պետությունների տարածքում անցկացվող միջազգային կինոփառատոների եւ այլ կինոմիջոցառումների՝ համաձայն դրանց ընթացակարգերի:

10. Կողմերը համագործակցություն կիրականացնեն Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության գրադարանների միջեւ՝ գրափոխանակմանը օժանդակելու, գրադարանավարների եւ մատենագիրների՝ գիտագործնական կոնֆերանսներին, գիտաժողովներին, գրադարանային գործի վերաբերյալ սեմինարներին մասնակցության ճանապարհով:

11. Կողմերը տեղեկատվություն կփոխանակեն պատմամշակութային ժառանգության հաշվառման, պահպանման, վերականգնման, օգտագործման եւ պրոպագանդման հարցերի վերաբերյալ, ինչպես նաեւ կուսումնասիրեն համատեղ վերականգնողական աշխատանքներ, գիտական եւ գործնական սեմինարներ, գիտաժողովներ, մասնագետների եւ փորձագետների հանդիպումներ, արշավախմբեր կազմակերպելու հնարավորությունը:

Կողմերը կօժանդակեն Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության

ժողովուրդների պատմամշակութային ժառանգության ուսումնասիրմանը, Կողմերի պետությունների տարածքում մշակութային ժառանգության օբյեկտների հայտնաբերմանն ու հաշվառմանը:

Կողմերը կապահովեն Հայաստանի եւ Ռուսաստանի արխիվներում, գրադարաններում, թանգարաններում հավաքված մշակութային արժեքների հասանելիությունը երկու պետությունների քաղաքացիների համար:

12. Կողմերը միջազգային իրավունքի նորմերին եւ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, իրենց իրավասության սահմաններում կգարգացնեն համագործակցությունը անօրինական ներմուծման արդյունքում մյուս Կողմի պետության տարածքում հայտնված մշակութային արժեքների հայտնաբերման ուղղությամբ:

Կողմերն իրենց իրավասության շրջանակներում՝ Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան նաեւ միջոցառումներ կիրականացնեն մշակութային արժեքների ապօրինի ներմուծումն ու արտահանումը կանխելու ուղղությամբ, տեղեկատվություն կփոխանակեն տվյալ խնդրի առնչությամբ եւ կօժանդակեն մյուս Կողմի պետության ապօրինի ներմուծման արդյունքում ապօրինի արտահանված մշակութային արժեքների վերադարձմանը:

13. Մյուս Կողմի փորձին ծանոթանալու եւ համագործակցության խորացման նպատակով Կողմերը կնախատեսեն պատվիրակությունների եւ տեղեկատվական կապերի փոխանակումներ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության եւ Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջեւ:

14. Որեւէ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, Կողմերի միջեւ համագործակցությունը կիրականացվի հետեւյալ պայմաններով.

1. Պատվիրակությունների փոխանակություն՝

1.1 Ուղարկող Կողմը վճարում է իր պատվիրակությունների եւ առանձին ներկայացուցիչների միջազգային ճանապարհածախսը, ինչպես նաեւ բժշկական ապահովագրությունը:

Ընդունող Կողմը վճարում է կեցության եւ սննդի ծախսերը, երկրի ներքին տրանսպորտային ծախսերը, թարգմանիչների ծառայությունը, մշակութային ծրագիրը, ապահովում է շտապ բուժօգնությամբ:

2. Ցուցահանդեսների կազմակերպման, թատրոնների եւ գեղարվեստական խմբերի հյուրախաղերի պայմանները եւ փոխադարձ պարտավորությունները /ժամկետներ, ցուցանմուշների եւ դեկորների տեղափոխման տրանսպորտային ծախսեր, ուղեկցողների ճանապարհածախս, մաքսային եւ պահեստային ծախսեր, անվտանգության ապահովում, ապահովագրություն եւ այլն/ համաձայնեցվելու են յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար Կողմերի շահագրգիռ կազմակերպությունների կողմից եւ ամրագրվելու են հատուկ պայմանագրերով:

Սույն Ծրագրի դրույթները չեն բացառում համագործակցության այլ ձեւեր, որոնց իրականացումը կդառնա առանձին համաձայնագրի առարկա:

15. Կողմերը՝ սույն Ծրագրի գործնական կիրարկման նպատակով, անհրաժեշտությունից ելնելով, փոխադարձության հիման վրա կստորագրեն համագործակցության մասին այլ արձանագրություններ եւ համաձայնագրեր:

16. Սույն Ծրագրի դրույթների կիրարկման հետ կապված Կողմերի բոլոր տարաձայնությունները կկարգավորվեն բանակցությունների եւ խորհրդատվությունների ճանապարհով:

17. Սույն ծրագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից եւ գործում է մինչեւ 2012 թ. դեկտեմբերի 31-ը:

18. Սույն Ծրագիրը միջազգային պայմանագիր չի հանդիսանում, չի առաջացնում

միջազգային իրավունքով կարգավորվող իրավունքներ եւ պարտավորություններ եւ իրականացվելու է Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Կատարված է ք. Մոսկվայում, 11 նոյեմբերի 2009 թ., երկու օրինակից, յուրաքանչյուրը հայերեն եւ ռուսերեն լեզուներով:

ՌԺԻ մեջ է մտել 11 նոյեմբերի, 2009 թվական